Ս. ՇՏԻԿՅԱՆ

ԵՐԿՈՒ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Առաջինը սկիզբ առավ մեր դարի քսանական թվականներին, Արևմտյան Ուկրաինայում գտնվող Շեպետովկա գավառական փոքրիկ քաղաքում: Այդ քաղաքի կենտրոնական փողոցներից մեկի վրա, երկհարկանի առանձնատան մեջ ապրում էր ազնվական Բելոկոպիտովների երեք հոգուց բաղկացած ընտանիքը: Վատնող ու շռայլող, հարբեցող ու զինարբուքների սիրահար էին Բելոկոպիտովները՝ թե հայրը՝ Սերգեյ Վասիլևիչը, և թե նրա երկու որդիները՝ Օլեգը և Իվանը: Չէր լինում գրեթե ոչ մի օր, որ Շեպետովկայի բնակիչները ականատես չլինեին, թե ինչպես էր հարբած հայրը ծեծում իր որդիներին, կամ ինչպես սրանք երկուսով «փայփայում» էին իրենց հորը մինչև կիսամեռ անելը: Օր չէր լինում, որ քաղաքի ոստիկանությունը «հյուր» չգնար Բելոկոպիտովներին և նրանց զսպելու համար համապատասխան միջոցներ չձեռնարկեր...

Այս տհաճ ընտանիքի կյանքում, սակայն, կար մի հանգամանք, որը զաղտնի հետաքրքրության տեղիք էր տալիս շեպետովկացիներին: Թե՛ Սերգեյ Վասիլևիչը, և թե՛ մանավանդ նրա երկու որդիները, գեղանկարչական կտավներ գնելու սիրահարներ էին: Հաշվի չառնելով ոչ մի դժվարություն, նրանք ուղևորվում էին ոչ միայն Ռուսաստանի ամենատարբեր քաղաքներ, գնելու թանկարժեք յուղանկարներ, հազվագյուտ սրբապատկերներ կամ եվրոպական հռչակավոր նկարիչների մեծարժեք ստեղծագործություններ, այլև բաց չէին թողնում և ոչ մի տոնավաճառ, Եվրոպայի որ քաղաքում էլ լիներ, այնտեղ մեկնելու, վաճառքի հանված ամենաարժեքավոր նկարները գնելու համար: Եվ այդպես օրեր, ամիսներ ու տարիներ շարունակ: Համաքաղաքացիներից ու հարևաններից ոչ ոք այդպես էլ չիմացավ, թե ի՞նչ կտավներ էին Բելոկոպիտովների գնածները, քանի՞ հատ էին դրանք, Ռուսաստանի կամ Եվրոպայի ո՞ր քաղաքներում էին դրանք ձեռք բերվել կամ մասնագիտական առումով ի՞նչ արժեք էին ներկայացնում: Բելոկոպիտովները իրենց անտանելի վարքագծի պատճառով արհամարհված մարդիկ էին ողջ Շեպետովկայում, նրանց տուն այցելողներ

գրեթե չկային, իսկ սակավաթիվ հյուրերին էլ այդ նկարներից մեկ-երկուսը հազիվ էին ցույց տալիս։

Այդ անմարդկային վարքագիծն էր պատճառը, որ 1919 թ. փետրվարին ՌԻկրաինայում, բանվորա-գյուղացիական հեղափոխության հաղթանակից հետո, Շեպետովկայի ամբողջ բնակչությունը, զինված ով ինչով կարող էր, ներխուժեց բոլորի համար տհաճ դարձած Բելոկոպիտովների երկհարկանի մենատունը՝ տանտերերին րոպե առաջ քաղաքից վռնդելու համար։ Սակայն «հյուրերին» զարմանալի անակնկալ էր սպասում։ Մենատունը կատարելապես դատարկ էր, տանտերերից ոչ ոք չկար, տնային քիչ թե շատ արժեքավոր իրերը նույնպես չկային։ Սենյակներից մեկում, սակայն, պատերի տակ բրեզենտե հատուկ պարկերում, խնամքով շարված էին Բելոկոպիտովների գնած բոլոր մեծ ու փոքր յուղանկարները, որոնք, ինչպես միաձայն որոշեցին ներկաները, տանտերերը պատրաստել էին փախցնելու համար, բայց չէին հասցրել։ Հենց այդպես էլ նկարները փոխադրվեցին քաղաքի նորաստեղծ Խորհրդային իշխանության՝ Դեպուտատների խորհրդի շենքի նկուղը։ Մնաց Բելոկոպիտովների դատարկ մենատունը իր փոքրիկ պարտեզով և պարտեզի ծայրում գտնվող կիսավեր, առաջին հայացքից ոչ մի բանի պետք չեկող փայտանոցով։

Այսպես շարունակվեց մինչև 1935 թվականը, երբ Մոսկվայի պետական համալսարանի արվեստագիտության ֆակուլտետն ավարտելուց հետո, իրենց ծննդավայր Շեպետովկա վերադարձան Կլավդիա Լիտվինովան և Վիկտոր Ստուկալինը։ Եկան ամբողջապես գործի լծվելու, գիշեր-ցերեկ աշխատելու անսքող եռանդով։ Դեռ մինչև ուսման մեկնելը, Կլավդիան ևս ինչ-որ բաներ լսել էր Բելոկոպիտովների հավաքածուի մասին, ուստի զարմանալի չէ, որ վերադառնալուն պես ձեռնամուխ եղավ այդ հանելուկային հավաքածուն գտնելու և ուսումնասիրելու աշխատանքներին։ Արդյունքները նույնիսկ իր՝ Կլավդիայի համար ապշեցուցիչ եղան։ Պարզվեց, որ նկարների մեջ կային Ռեպինի, Սուրիկովի, Այվազովսկու, Մոնեի, Պուսենի, Ֆրագոնարի, Վենեցիանովի, Վասնեցովի, ռուսական և եվրոպական շատ ուրիշ դասական նկարիչների ստեղծագործությունների բնագրեր։ Պարզվեց, որ դրանցից մի մասն էլ եզակի պահպանված օրինակներ են (ունիկում), իսկ դա նշանակում էր, որ աշխարհի ոչ

մի պատկերասրահ այդ կտավների երկրորդը չուներ։ Չուներ նույնիսկ Լենինգրադի Էրմիտաժն ու Փարիզի Լուվրը։ Կարիք կա՞ լրացուցիչ բացատրությունների...

Բնական է, որ առաջին իսկ գործը պետք է լիներ այդ նկարները Դեպուտատների խորհրդի շենքի նկուղից դուրս բերելը և ցուցադրելը, այսինքն՝ քաղաքում այդ հազվագյուտ կտավներին արժանի պատկերասրահ ստեղծելը։ Բարեպատեհ միտքը հուշեց Շեպետովկայում արդեն քաղաքագլուխ դարձած Ստուկալինը. քանի որ Բելոկոպիտովների մենատունը դատարկ էր, ինչո՞ւ այն չվերածել պատկերասրահ-ցուցահանդեսի։ Կլավդիան քննեց մենատունը, առաջարկեց մասնագիտական բնույթի մի քանի կարևոր փոփոխություններ կատարել՝ անհրաժեշտ է քանդել միջնորմներից մեկ-երկուսը, կառուցել մի քանի նորերը և ամեն ինչ հիանալի կլինի։ Եվ եռաց աշխատանքը...

... Պատկերասրահի հանդիսավոր բացումը նշանակված էր 1941 թ. մայիսի 1-ին, և համակ աշխատանք ու կրակ դարձած Կլավդիան հավատացած էր, որ ուշացում չի լինի։ Մենատունն արդեն վերակառուցվել էր ու հարմարեցվել պատկերասրահի պահանջներին, թանկարժեք կտավները մեկ առ մեկ և, ի դեպ, հատկապես այդ նպատակի համար առանձնացված միլիցիոներների դասակի ուղեկցությամբ փոխադրվում ու կախվում էին համապատասխան տեղերում։ Այն նկարները, որոնք որոշ վերականգնումների կարիք ունեին, հանձնվում էին Մոսկվայից հրավիրված մասնագետ-վերականգնողների խմբին, որոնք նույնպես աշխատում էին գիշեր-ցերեկ։

Այո, շենքն արդեն վերականգնվել էր ու մաքրվել, բակի պարտեզը հաճելի տեսքի էր բերվել։ Մնում էր մաքրել-հեռացնել պարտեզի ծայրում գտնվող ավերակ փայտանոցը, որն արդեն լրիվ քանդվելով, կատարյալ աղբանոցի էր վերածվել։ Քիչ մտածելուց հետո, Կլավդիան որոշեց ինքնուրույն անել այդ գործը։ Անելիքն առանձնապես բարդ չէր, ինքն էլ ֆիզիկական աշխատանքի սովոր և այդպիսի աշխատանքներ սիրող, ի՞նչ կա որ։

... Գործն ընթանում էր արագ և աշխույժ, չնայած կատարվում էր երեկոյան՝ աշխատանքից հետո։ Կլավդիան փոքրիկ բահով փորում էր ավերակ փայտանոցի աղբն ու հողը, լցնում էր դույլերի մեջ և տանում էր պատկերասրահի տարածքից դուրս։ Եվ երևի այդպես հանգիստ ու խաղաղ էլ կավարտվեր ամեն ինչ, եթե մի օր երեկոյան

փայտանոցում կուտակված աղբի հերթական շերտը փորելիս, Կլավդիայի բահը չդիպչեր ինչ-որ փայտե առարկայի: Քիչ-քիչ մաքրվեց այդ առարկան, և զարմացած Կլավդիան էլ՛ ավելի զարմանքով նկատեց, որ դա բոլորին անհայտ զաղտնարանի մուտքի դուռ է: Սկզբում որոշեց չմտնել, բայց հետաքրքրասիրությունը հաղթեց: Դժվարությամբ բարձրացնելով հնաոճ, ճռռացող դուռը և վառելով լուցկին լուցկու հետևից, նա քարե նեղլիկ սանդուղքով ցած իջավ:

Այո, դա զաղտնարան էր, կառուցված հաստատուն ու հիմնավոր, ուներ ուղղանկյան ձև, հատակն էլ ծածկված էր մանրացված խճով ու ավազով: Մի րոպե Կլավդիային թվաց, թե այնտեղ ոչինչ չկար, բայց վառելով հերթական լուցկին, նա զաղտնարանի վերին անկյունում գետնի մեջ խրված մի սնդուկ նկատեց: Սնդուկը մեծ էր, հին, պատված պղնձե սալիկներով, ուներ երկաթե անկյունակալներ և տարօրինակ, հեռախոսի թվային սկավառակի նմանվող փական: Այն ինչ-որ ձևով բանալու, կամ գոնե տեղից շարժելու բոլոր փորձերն անօգուտ անցան և դա, ճիշտն ասած, Կլավդիային շատ էլ չանհանգստացրեց: Առջևում մայիսի 1-ն է, պատկերասրահի հանդիսավոր բացումն է լինելու, շատ ականավոր մասնագետներ ու բարձրաստիճան հյուրեր են գալու, իսկ դրա համար մինչև վերջ պատրաստվել է պետք, հիմա ի՞նչ զաղտնարանի ու պապենական սնդուկի ժամանակ է:

Դուռը փակեց նույնությամբ, նորից ծածկեց նախկին ձևով ու տեղնուտեղն էլ որոշեց իր «զյուտի» մասին չասել ոչ ոքի, անգամ իր մորը, անգամ զինվորական ամուսնուն: Ճի՞շտ էր դա: Կլավդիան կարծում էր, որ ճիշտ է, իսկ մենք ձեզ հետ, փոքրիկ բարեկամներ, քիչ հետո կտեսնենք, թե ինչպիսի՛ մեծ սխալ թույլ տվեց նա...

Իսկ դրա փոխարեն, անպատմելի շուքով անցավ 1941 թ. մայիսի 1-ը՝ պատկերասրահի հանդիսավոր բացումը: Խորհրդային ու արտասահմանյան հյուրերը բառացիորեն հեղեղեցին ամբողջ պատկերասրահը, աջ ու ձախ չխկչխկացին ֆոտո և կինո ապարատները, թղթակիցներն ու մասնագետները հարցերի տարափ տեղացին տնօրենի՝ Կլավդիա Լիտվինովայի վրա: Տարված այդ բոլորով, հիացած Կլավդիայի սպառիչ, խելացի պատասխաններից, մանավանդ որ այդ պատասխանները տրվում էին

ռուսերեն ու գերմաներեն լեզուներով, հյուրերը չէին էլ նկատում պատկերասրահի բակի ծայրում գտնվող ավերակ փայտանոցը, որն, ի դեպ, կայանալիք հանդիսությունների առիթով, Կլավդիան ծածկել էր տվել վարդերի թփերով: Խոսակցությունները, այս կամ այն նկարի շուրջ ծագած մասնագիտական բանավեճերը, պաշտոնական հարցազրույցները շատ-շատ եղան:

Այդ խոսակցությունները ավելի մեծ թափով շարունակվեցին նաև հետագայում: Իտալական «Ստամպա» թերթն, օրինակ, խնդրում էր Կլավդիային գրել և իրենց ուղարկել պատկերասրահի պատմությունը, իսկ ֆրանսիական «Ֆիգարոն» ծավալուն մի հոդված էր ուզում այն մասին, թե ինչպե՞ս է պատահել, որ Սեզանի, Մոնեի, Պուսենի և այլոց յուղանկարները, որոնք չեն պահպանվել ֆրանսիական և ոչ մի պատկերասրահներում, հանկարծ հայտնվել են Շեպետովկայում: Անգլիական «Մորնինգ սթար» թերթը թույլտվություն էր խնդրում՝ արվեստագետների մի խումբ ուղարկելու և թանկարժեք նկարները տեղում քննելու համար, իսկ իտալական «Ավանտեն» խնդրում էր իրեն՝ Կլավդիային, գալ Հռոմ՝ պատկերասրահի մասին զեկուցումներով հանդես գալու համար և այլն: Գործ, ինչպես տեսնում եք, իրոք որ շատ կար և Կլավդիան աշխատում էր անընդհատ ու անդադար: ՈՒ հասկանալի է, ժամանակ էլ չուներ մտածելու ո՛չ ավերակ փայտանոցի տակ գտնվող գաղտնարանի, և ո՛չ էլ հանելուկային սնդուկի մասին: Դե, ի վերջո, ինքն է դրա տերը և մի ազատ ժամանակ հիմնավորապես կզբաղվի դրանցով: Չէ՞ որ այդ բոլորի մասին ոչ ոք չգիտի:

Բայց, ավա՜ղ, ամեն ինչ այդպես չեղավ:

Աշխարհ եկավ չարագուշակ 1941 թ. հունիսի 22-ը և ֆաշիստական Գերմանիայի բանակները ուխտադրժորեն խուժեցին մեր երկիրը: Սկսվեց Հայրենական մեծ պատերազմը: Իսկ որովհետև Շեպետովկա քաղաքը գտնվում էր սահմանից ոչ հեռու, ապա գերմանական զորամասերը երկու օր անց, 1941 թ. հունիսի 24-ին, մոտեցան քաղաքի մատույցներին: Եվ չնայած նրան, որ քաղաքում ստեղծվել էր Պաշտպանական կոմիտե քաղաքագլուխ Վիկտոր Ստուկալինի գլխավորությամբ, և քաղաքի մատույցներում կատաղորեն կռվում էին Կարմիր բանակի զորամասերն ու

աշխարհագորային ջոկատները, բոլորի համար պարզ էր, որ Շեպետովկան կարող էր դիմանալ հազիվ մեկ-երկու օր,,,

Դա գիտեր նաև Կլավդիան և առաջին միտքը, որ անհապաղ ծագեց նրա մոտ՝ թանկարժեք նկարներն էվակուացնելու, Խորհրդային Միության որևէ հեռավոր ու անվտանգ քաղաք փոխադրելու գաղափարն էր: Բայց որտե՞ղ, ո՞ր քաղաքը. հարցը պատասխան չուներ: Տրանսպորտային ի՞նչ միջոցներով, երբ քաղաքում ոչ միայն բոլոր ավտոմեքենաները, այլև սայլերն ու ձեռնասայլակները ի սպաս էին դրված պաշտպանությունը կազմակերպելու գործին. հարցը դարձյալ պատասխան չուներ: Ո՞վ կօգներ իրեն այդ աշխատանքներում, իսկ իրեն պետք էր գոնե մի քանի հոգի. այս հարցն էլ էր մնում անպատասխան: Եվ Կլավդիան որոշեց մենակ, առանց ուրիշներին տեղեկացնելու, զբաղվել այդ գործով: Ա՜խ նրա բնավորության այս պախարակելի գիծը՝ գործեր ձեռնարկել առանց որևէ մեկին տեղյակ պահելու, ինչպես արել էր գաղտնարանի ժամանակ, ինչպես որոշեց անել նաև հիմա... Հունիսի 24-ի երեկոյան, երբ գերմանական հրատանին ու ավիացիան կատաղորեն ռմբակոծում էին քաղաքը, նա դուրս եկավ տնից և պայթող ռումբերի որոտի տակ մի կերպ հասավ պատկերասրահի շենք: «Զինվեց» իր կարճպոչ բահով և արագորեն մոտենալով նվիրական փայտանոցին, գործի անցավ...

Հանգիստ առավ միայն այն ժամանակ, երբ կիսավեր փայտանոցի՝ վարդերի թփերը մի կողմ տալուց և տեղում եղած աղբն ու հողը հեռացնելուց հետո, հասավ գաղտնարանի դռանը: Այժմ սկսվում էր գործի ամենադժվար մասը՝ նկարները փոխադրելը: Կլավդիան կարծում էր, որ աշխատանքը կավարտի մեկ-երկու ժամում, բայց այն տևեց շատ ավելի: Եվ միայն նրանից հետո, երբ բոլոր նկարները՝ խնամքով ու բարեխղճությամբ մեկ առ մեկ դասավորվեցին գաղտնարանում, կրկին փակվեց «կախարդական» դուռը, ծածկվեց հողի ու աղբի շերտով, և դա էլ կրկին ծածկվեց վարդերի թփերով, Կլավդիան, հոգնածությունից ոտքերը հազիվ քարշ տալով, իր գործն ավարտված համարեց:

Սկզբում որոշեց գիշերել հենց այդտեղ՝ պատկերասրահի շենքի սենյակներից մեկում, մանավանդ որ քաղաքի ռմբակոծությունը շարունակվում էր և ուրեմն տուն

վերադառնալն այնքան էլ անվտանգ չէր: Երանի՜ թե այդպես աներ, բայց չգիտես ինչու, միտքը փոխեց: Մի վերջին անգամ նայեց իր կատարած աշխատանքին, գոհունակությամբ ժպտաց, մաքրեց հողոտ հագուստները և ուղղվեց դեպի ելքի դուռը: Հենց այդ պահին լսվեց մոտեցող ռումբի չարագույժ սուլոցը, որին հաջորդեց սոսկալի պայթյունը հենց Կլավդիայի մոտ, նրա կողքին: Մահը վրա հասավ ակնթարթորեն:

Հաջորդ օրը գերմանացիք մտան Շեպետովկա:

Եվ գերմանացիների իշխանության դաժան ժամանակներից սկսած, պատկերասրահի շենքում, այսինքն՝ Բելոկոպիտովների նախկին մենատանը, սկսեցին տեղի ունենալ միանգամայն խորհրդավոր իրադարձություններ, որոնք վախ ու սարսափ տարածեցին նրա մասին: Շենքը, մանավանդ նկարներից զրկվելուց հետո, լրիվ դատարկ էր մնացել և փողոցին էր «նայում» իր մեծ ու խավարչտին լուսամուտներով: Սակայն եղան շեպետովկացիներ, ովքեր հավաստիացնում էին, թե իրենք գիշերը և այն էլ մի քանի անգամ, այդ խավար լուսամուտներում լույս են նկատել: Լույսը սահել է այս ու այն կողմ, անցել է սենյակից սենյակ, «բարձրացել» է պատերի վրա և շուտով անհայտացել է: Պատմողներից մեկը նույնիսկ ասում էր, որ այդ լույսն արձակողը էլեկտրական լապտեր է եղել, և ինքը պարզորոշ տեսել է այն ձեռքը, որը բռնել է էլեկտրական լապտերը: Սրան շուտով միացավ ոչ պակաս խորհրդավոր հետևյալ միջադեպը: Քանի որ պատկերասրահի շենքն ամբողջովին դատարկ էր, այնտեղ «բնակություն էին հաստատել» երեխաները՝ մի ծայրից մյուսը վազվզելու, ցանկացած դատարկ սենյակ մտնելու իմաստով: Մի օր էլ երեխաները զարմանքով տեսել են, որ սենյակներից մեկի դուռը, որն առաջ բաց էր, հանկարծ փակված է եղել: Դուռը ծեծել են, և անպատասխան մնալով, ուժով բաց են արել այն: Սենյակում ոչ ոք չի եղել, բայց դատելով նրանից, որ այնտեղ եղել է ծալովի մահճակալ՝ անկողնով, ծխախոտի մոխիր, հացի փշրանք և նույնիսկ մի բաժակ ջուր, եզրակացրել են, որ այդտեղ մարդ է գիշերել: Երեխաները այս ամենը պատմում էին մեծերին և հավաստիացնում, որ ցանկացած պահի կարող են ցույց տալ այն ամենը, ինչի մասին պատմում են: Այս պատմությունն էլ դեռ չէր հասցրել մոռացվել, երբ քաղաքում տարածվեց մեկ այլ խորհրդավոր լուր: Նախկին պատկերասրահի բակում գտնվող կիսաքանդ փայտանոցը, որի ավերակների վրա

Կլավդիան վարդի թփեր էր աճեցրել, անհայտ մարդիկ հիմնավորապես քարուքանդ էին արել: Աջ ու ձախ թափթփել, ջարդոտել ու տրորել էին գրեթե բոլոր թփերը, փորփրել էին գետնի հողն ու աղբը ճիշտ այնպես, ինչպես դա անում է խոզը գետնակաղին որոնելիս: Շեպետովկայի բնակիչները հենց այդպես էլ բացատրեցին եղածը. փայտանոցը փորփրել են քաղաքի տնատերերի խոզերը, հակառակ դեպքում մարդը, եթե, իհարկե, նա հոգեկան հիվանդ չէ, ինչո՞ւ պետք է գնար աղբանոց քանդելու: Այսպես պատմում էին, հավաստիացնում իրար ու անմիջապես էլ հավելում, որ Շեպետովկայում խոզեր գրեթե չկան...

Ահա թե ինչու, երբ 1945 թվականի գարնանը քաղաքի մատույցներում նորից որոտացին հրանոթները, բայց այս անգամ մերը՝ խորհրդայինը, և Կարմիր զինվորների հուժկու «ուռան» ազդարարեց Շեպետովկայի ազատագրման սկիզբը ֆաշիզմի անտանելի լծից, երբ քաղաքում վերահաստատվեցին Խորհրդային կարգերը և օկուպացիայի տարիներին պարտիզանական ջոկատի նշանավոր հրամանատար Վիկտոր Ստուկալինը կրկին ստանձնեց քաղաքագլխի պարտականությունները, Շեպետովկայի բնակիչները անհապաղ դիմեցին նրան, խնդրելով զբաղվել պատկերասրահի խորհրդավոր շենքի հարցով:

Ստուկալինին հատուկ հիշեցնում պետք էլ չէր այդ աշխատանքներն օր առաջ սկսելու, այսինքն՝ հանրահռչակ պատկերասրահը վերականգնելու համար: Այդ նպատակով ստեղծված հանձնաժողովի առաջ, բնականաբար, ծագեց առաջին ամենահիմնական հարցը. որտե՞ղ են նկարները: Կլավդիան, հասկանալի է, չկար: Մարդիկ չկարողացան անգամ մտաբերել, թե ո՞վ և ե՞րբ է կազմակերպել նրա թաղումը: Նրա բնակարանում կատարված որոնումները, ընկերուհիների ու ծանոթների շրջանում անցկացված հարց ու պրպտուքները շոշափելի ոչինչ չտվեցին: Ոչինչ չտվեցին նաև պատկերասրահի շենքի, նրա մեծ ու փոքր սենյակների ու օժանդակ հարմարությունների մասնագիտական քննությունը: Կիսավեր փայտանոցն, իհարկե, ոչ ոքի չհետաքրքրեց: Այս ու այն՝ քիչ թե շատ հավանական տեղերում որոնումներ կատարելուց և մխիթարական ոչ մի արդյունքի չհասնելուց հետո, հանձնաժողովը ստիպված եղավ զեկուցել Ստուկալինին, որ պատկերասրահի թանկարժեք նկարներից և ոչ մեկը իրենք

չկարողացան հայտնաբերել: Անստույգ մի կարծիք հայտնվեց, որ նահանջող գերմանացիք հավանորեն իրենց հետ տարել են դրանք:

Այս պատմությունն աստիճանաբար սկսեց մոռացվել...

•••

Երկրորդ պատմությունը, որն ասես ոչ մի կապ չունի նախորդի հետ, ծայր առավ 1939 թվականից, գերմանական Մյունխեն քաղաքում: Ֆաշիզմի որջն ու օրրան էր Մյունխենը, այստեղ էին հավաքվում ֆաշիստական կուսակցության մեծ ու փոքր ղեկավարներ՝ աշխարհը նվաճելու մասին իրենց ցնորական ճառերն ասելու, ամեն աննշան առիթով «Հա՛յլ Հիտլեր» կամ «Հիտլեր հո՛խ, հո՛խ» գոռալու համար: Մյունխենում էլ, ահա, հիշյալ 1939 թվականից, սկսեց երևալ բարձրահասակ, միջին տարիքի մի գերմանացի, ով կոչվում էր Յոախիմ Վայսհուֆ և նացիստական կուսակցության ջանասեր անդամներից մեկն էր: Նա Մյունխեն էր եկել մեկ այլ երկրից՝ Իտալիայից կամ Ֆրանսիայից: Իր ընկերների նման Վայսհուֆն էլ սիրում էր ճառեր ասել աշխարհը վերաբաժանելու կամ Ադոլֆ Հիտլերի՝ մարդկության գերագույն հանճարը լինելու մասին, սիրում էր գարեջրի բաժակի «ընկերակցությամբ» կոչեր անել պայքարելու կոմունիստական Ռուսաստանի դեմ: Ուստի զարմանալի չէր, որ երբ 1941 թվականի հունիսի 22-ին գերմանական զորքերն անցան Խորհրդային Միության սահմանը, Յոախիմ Վայսհուֆը անհապաղ դիմեց «Գեբիտսկոմիսարիատ», այսինքն՝ զինկոմիսարիատ, կամավոր ռազմաճակատ մեկնելու համար: Այս կապակցությամբ գրված նրա դիմումը, սակայն, որտեղ Վայսհուֆը խոստանում էր «անձնուրացորեն ծառայել աստծուն ու ֆյուրերին», ուներ այսպիսի հավելում. նա խնդրում էր իրեն ուղարկել հարավային ռազմաճակատ՝ «Ուկրաինայի քաղաքները և մանավանդ Շեպետովկան կոմունիստներից ազատագրելու համար»:

Գեբիտսկոմիսարիատում քննեցին դիմումը, գովաբանեցին գրողի արիական ցանկությունը՝ բոպե առաջ պայքար սկսել ռուսների դեմ և ուղարկեցին... Մոսկվայի ռազմաճակատ: Պատճառաբանությո՞ւնը, ֆյուրերին հիմա հարկավոր էր առաջին հերթին գրավել Մոսկվան և, բնականաբար, բոլոր տիպի զորամիավորումներն էլ

ուղարկվում են այնտեղ: Մի քանի ամիս անց Վայսհուֆը գրեց երկրորդ նամակը, այս անգամ հասցեագրված Մոսկվայի ռազմաճակատի գերմանական հրամանատարության շտաբին: Նա խնդրում էր «նկատի ունենալով իր անձնուրաց ծառայությունը» իրեն նշանակել «կոմունիստական վարակից նոր ազատված» ուկրաինական Շեպետովկա քաղաքի պարետ կամ գոնե պարետի տեղակալ: Շտաբում կարդացին Վայսհուֆի դիմումը, զարմացան, նույնիսկ ծաղրեցին զինվորի տարօրինակ ցանկությունը: Դիմումի վրա հայտնվեց ռազմաճակատի հրամանատարի մակագրությունը. «Ցանկությունը հաշվի չառնել: Համառելու դեպքում ուղարկել պատժիչ ջոկատ»: Անցավ է՛լի մի որոշ ժամանակ և Վայսհուֆը գրեց երրորդ դիմումը՝ դարձյալ նույն հասցեով: Իրեն հայտնի է դարձել, որ Ուկրաինայի արևմտյան մասերում և մանավանդ Շեպետովկայի շրջանում իրենց գործունեությունն են ակտիվացրել խորհրդային պարտիզանները: Ուստի խնդրում է իրեն ուղարկել այնտեղ՝ «այդ վտանգավոր ժանտախտի դեմ պայքարելու համար»: Այս դիմումը արդեն բացահայտ ծաղրի ենթարկվեց: Վայսհուֆին պատասխանի անգամ չարժանացրեցին և որոշակիորեն հասկացրեցին, որ նման վարքագիծը շարունակելու դեպքում գործը կհանձնվի ռազմա-դաշտային դատարան:

Ավա՜ղ, Վայսհուֆն այս ամենից համապատասխան եզրակացություններ չարեց: Նա դարձյալ շարունակեց կապեր և ուղիներ փնտրել, այս անգամ արդեն աններելի միջոցներով ու անթույլատրելի եղանակներով, իր նպատակն իրականացնելու համար: Դա էլ հենց եղավ գլխավոր պատճառը, որ բոլորին արդեն ձանձրացրած այս զինվորականի գործով հիմնավորապես սկսի զբաղվել Գեստապոն և զբաղվի հատկապես նրա անցյալի վերաբերյալ տեղեկություններ հավաքելով: Եվ պարզվեց անհավատալի մի իրողություն. իրեն գերմանացի հայտարարող, արիական ռասսայի անունից մշտապես հանդես եկող Վայսհուֆը... ազգությամբ գերմանացի չէ, և ավելին, այդ փաստը նա թաքցել է նացիստական կուսակցությունից: Նրա «Զոլդատենզախեի» (Զինվորական գործ) վրա հայտնվեց Գեստապոյի մարզային պետի հետևյալ սարսափելի մակագրությունը. «խաբել է կուսակցությանը և ֆյուրերին»: Այս մակագրությունը համապատասխան պարզաբանումների կարիք չունի և Վայսհուֆը հասկացավ, որ իր օրերը հաշված են: Փրկության ելքը մնում էր մեկը և 1945 թ. մարտին, այսինքն

Հայրենական պատերազմի ավարտից հաշված օրեր առաջ, նա դիմեց այդ ելքին՝ գերի հանձնվեց:

... Ռազմագերին նստած էր քննիչ Օռլովի առջև, կորաքամակ, պատրաստակամ, հաճոյակատար մի ժպիտ դեմքին: Բարեհաճություն մուրող հայացքով նա նայում էր քննիչին և մի տեսակ փութկոտ ջանասիրությամբ շտապ պատասխանում էր նրա հարցերին: Այո՛, ճիշտ է, ինքը նացիստական կուսակցությանն անդամագրվել է 1930-ական թվականներից, բայց այդ ժամանակվանից էլ դարձել է նրանց գաղափարական անզիջում հակառակորդը: Նա բազմիցս հանդես է եկել թե՛ այդ կուսակցության կիսախելագար ֆյուրերի, և թե՛ նրա վարած քաղաքականության դեմ: Քանի՜-քանի՜ անգամ իրեն կամեցել են բանտարկել, անգամ սպանել, բայց նա ոչինչ նկատի չառնելով շարունակել է պայքարը:

... Ինչու է կամավոր բանա՞կ գնացել: Դե մի՞թե պարզ չէ: Որպեսզի զինվորների մեջ լինելով՝ կարողանա բացատրել նրանց ֆաշիստների սանձազերծած պատերազմի ամբողջ հիմարությունը՝ Հիտլերի մի նոր խելագարությունը: Նա զինվորներին մշտապես կոչ էր անում չենթարկվել սեփական հրամանատարությանը, գերի հանձնվել ռուսներին: Եվ գիտե՞ք, իրեն լսողներ շատ են եղել...

... Ինչու է փոխել իր ազգությո՞ւնը: Չէ՞ որ ինքը «աուտզայտեր» էր, այսինքն՝ այլաքաղաքացի և իրեն բանակ չէին տանում: Բայց նա ուզում էր անպայման լինել գերմանական զինվորների մեջ, նրանց կողքին, որպեսզի կարողանար հենց տեղում բացատրել նացիզմի ու ֆաշիզմի ամբողջ վտանգավորությունը: Գործն այս դեպքում ավելի կարևոր է, քան ազգությունը:

... Այո՛, իհարկե, նա գիտե, որ քաղաքացի քննիչն իրեն չի հավատում. չէ՞ որ ինքը ոչ մի փաստ չունի: Դրա համար էլ, ահա, խնդրում է իրեն ուղարկել թեկուզ ամենածանր, ամենադժվարին ֆիզիկական աշխատանքների: Նա գիտի, որ պատերազմը զգալի վնասներ է հասցրել, օրինակ, ուկրաինական Շեպետովկա քաղաքին: ՈՒստի խոնարհաբար խնդրում է ուղարկել իրեն այնտեղ, և տալ բացարձակապես ինչ գործ որ

հարմար կգտնեն: Նա իր քրտնաթոր աշխատանքով կապացուցի, թե որքան իրավացի են իր խոսքերը:

- Այդ բոլորը շատ լավ, Վայսհուֆ, – գերուն լսելուց հետո նրան դիմեց Օռլովը, – դուք ասացիք, որ փոխել եք ձեր ազգությունը և, փաստորեն, ձեր փաստաթղթերը կեղծ են: Իսկ ի՞նչ է ձեր իսկական անուն-ազգանունը:

Գերու դեմքին խորամանկ ժպիտ երևաց:

- Իմ գերմանական ազգանունը պետք է պարզապես թարգմանել, – սկսեց նա, - «վայս» նշանակում է սպիտակ, իսկ «հուֆ»՝ կճղակ: ՈՒրեմն՝ կստացվի Բելոկոպիտով: Անունս էլ Օլեգ է:

- Շատ լավ Օլեգ Բելոկոպիտով: Նախնական քննությունը հաշվի կառնի ձեր ցանկությունը Շեպետովկայում աշխատելու համար: Այսօր ավարտենք:

Ռազմագերին վեր կացավ և արդեն պատրաստվում էր դուրս գալ, երբ Օռլովը նրան ուղղեց վերջին հարցը.

- Ասացեք Բելոկոպիտով, իսկ ինչո՞ւ եք ուզում անպայման Շեպետովկա գնալ:

Բելոկոպիտովի դեմքին դարձյալ խորամանկ ժպիտ հայտնվեց:

- Գիտեք, – մի տեսակ զգույշ խոսելով սկսեց նա, – ես ինքս այդ քաղաքից եմ՝ Շեպետովկայից: Իմ նախնիներն էլ ծնվել ու ապրել են այնտեղ:

Ռազմագերուն տարան:

Առաջին հայացքից ամեն ինչ կարծես թե ճիշտ էր, տրամաբանական ու համոզիչ: Բելոկոպիտովի՝ կամավոր գերի հանձնվելը, զղջալը, հայրենի քաղաքին իր հանապազօրյա աշխատանքով օգտակար լինելու ցանկությունը: Քննիչ Օռլովն էլ կարծես թե հակված էր այդպես մտածել, բայց մի ներքին ձայն համառորեն նրան հուշում էր՝ այստեղ ինչ-որ բան այնպես չէ: Երկար մտորելուց հետո, նա որոշեց զանգել իր հին ընկերոջը՝ Շեպետովկայի քաղաքագլուխ Ստուկալինին և խորհրդակցել նրա հետ:

Մանավանդ որ Հայրենական մեծ պատերազմն արդեն հաղթականորեն ավարտվել էր և, ուրեմն, առիթը առավել քան հարմար էր: Մի քանի օր անընդմեջ զանգելուց հետո, Օռլովը վերջապես գտավ նրան:

- Ստուկալին, այդ դո՞ւ ես, ընկերս, – ուրախ-ուրախ սկսեց նա, – հոգիս դուրս եկավ քեզ որոնելով:

- Օռլով, սիրելիս, աշխատում եմ բառիս բուն իմաստով թե՛ ցերեկը, թե՛ գիշերը, – Ստուկալինը բարձրաձայն ծիծաղեց, – Դե գիտես, պատերազմն ավարտվել է, զբաղված ենք վերականգնելով ու վերակառուցելով, իսկ գործ՝ ինչքան ուզես: Ի՞նչ է պատահել:

- Լսի՛ր, քեզ որևէ բան ասո՞ւմ է Օլեգ Բելոկոպիտով ազգանունը:

Ստուկալինը քիչ մնաց ձեռքից վայր գցեր լսափողը:

- Օռլով դու... դու հասկանո՞ւմ ես, որ ինձ կաթվածի ես հասցնում, – հազիվ-հազ իրեն հավաքելուց հետո սկսեց նա, – ի՞նչ է, նկարները գտե՞լ ես:

- Ի՞նչ նկարներ:

- Հապա ի՞նչ գործ ունես Բելոկոպիտովների հետ:

- Գործը հետևյալն է, – Օռլովը լռեց, – Լսիր Ստուկալին, մեր խոսակցությունն արդեն հեռախոսային չէ: Ասա, ե՞րբ կկարողանաս ինձ ընդունել:

- Դու այնպիսի անուն ասացիր, – արդեն իրեն հավաքած խոսեց Ստուկալինը, – որ հազար անցաթուղթ արժե: Հիմա արդեն ես եմ ցանկանում րոպե առաջ քեզ հանդիպել:

Մի քանի օր անց երկու բարեկամները իրար հանդիպեցին քաղաքագլխի տանը: ՈՒրախ ողջագուրումներից ու փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող հարցումներից հետո, Ստուկալինը պատմեց այն ամենը, ինչ գիտեր Բելոկոպիտովների մասին: Իր իմացածն էլ պատմեց Օռլովը:

- Որպես նախնական եզրակացություն պետք է ասեմ հետևյալը, – քիչ մտորելուց հետո սկսեց քննիչը, – Օլեգ Բելոկոպիտովի եռանդուն ձգտումը դեպի իր հայրենի

քաղաքը ոչ մի կապ չունի քո ասած այդ նկարների հետ: Հնարավոր է, որ նա գիտի դրանց տեղը, բայց երեխայի համար անգամ պարզ է, որ եթե անգամ կարողանա գտնել դրանք, ապա ոչ կարող է դուրս տանել Շեպետովկայից և ոչ էր՝ առավել ևս վաճառքի հանել դրանք: Նրան իր ծննդավայրում հետաքրքրում է ինչ որ ավելի կարևոր և իր ամբողջ կյանքը վերջնականապես ապահովող մի բան: Իմ փորձից ելնելով՝ ենթադրում եմ, որ դա պետք է լինի ոսկեղեն, թանկարժեք քարեր, զարդեղեն: Եվ որ կարևոր է, նա որոշակիորեն գիտի դրանց տեղը և, հավանորեն, միայն ինքը գիտի: Ահա թե ինչու է նա բոպե առաջ աշխատում վերադառնալ Շեպետովկա և այդ բարիքի տերը դառնալ:

- Շատ լավ, հիմա դու ի՞նչ ես մտադիր անել:

- Ի՞նչ, – Օռլովն ուրախ աչքով արեց, – մենք կկատարենք Օլեգ Բելոկոպիտովի մեծ ցանկությունը և նրա հետ կգանք Շեպետովկա, այսինքն՝ իրենց տուն: Եվ դու էլ, թանկագին քաղաքագլուխ, պետք է օգնես մեզ: Գործը, ինչպես ինքդ էլ տեսնում ես, հետաքրքիր է դառնում:

•••

Նրանք եկան մի քանի օր անց՝ վեց հոգով, և Ստուկալինը, որը նույնպես մասնակցում էր աշխատանքներին, տեսնելուն պես ճանաչեց Օլեգ Բելոկոպիտովին: Ճիշտ է, տարիների ընթացքում նա նկատելիորեն սպիտակել էր, գիրացել, դեմքը ծածկվել էր կնճիռներով, բայց հիմնականում մնացել էր նույնը: Մյուսները, ինչպես Ստուկալինին հասկացրեց Օռլովը, արդարադատության բնագավառի աշխատողներ էին: Հյուրերը՝ վկայակոչելով Բելոկոպիտովի նյարդային վիճակը, աճապարեցին դեպի Շեպետովկայի՝ մեզ ծանոթ երկհարկանի մենատունը:

Ենթադրելով, որ հայրենական օջախը կարող էր հուզումնառատ զգացմունքների տեղիք տալ «տիրոջ» մոտ, Ստուկալինը կարգադրել էր փոքր-ինչ կարգի բերել մենատունը, մանավանդ, որ պատերազմի ընթացքում այն բավական անխնամ էր դարձել: Սակայն Բելոկոպիտովն իր «շքախմբով» մտնելով տան բակը, միայն հարևանցիորեն նայեց հայրական օջախին: Նրա շարժումները դարձան ավելի ջղային, պահվածքը՝ ավելի նյարդային: Տենդագին նայելով աջ ու ձախ՝ խլեց պատի մոտ դրված

բահերից մեկը և շեշտակի քայլվածքով գնաց դեպի փայտանոցի ավերակները: Նույնիսկ անփորձ Ստուկալինը զարմանքով նկատեց, թե ինչպե՜ս էին հուրհրում Բելոկոպիտովի աչքերը...

- Դա ավերակ շինություն է՝ հնուց մնացած, – Օռլովին բացատրեց քաղաքագլուխը, – միշտ էլ մտադրվել ենք մաքրել ու չի ստացվել: Չեմ հասկանում, թե ի՞նչ է որոնում այնտեղ:

Իսկ Բելոկոպիտովը, զինված բահով, փորում էր այնպիսի եռանդով, որ շուտով սկսեց հևալ շոգեկաթսայի նման: Էլի՜ մի քիչ, և նրա բահը դիպավ փայտե առարկայի, ապա զարմացած ներկաների աչքի առաջ երևաց մեզ հայտնի դուռը...

- Սպասե՜ք, քաղաքացի Բելոկոպիտով, – միջամտեց քննիչը, – շարունակությունն արդեն մեր գործն է: Ես ասացի, որ դուք արդեն անելիք չունե՜ք, – նկատելով Բելոկոպիտովի անհանգիստ շարժումները, խստորեն նրան դարձավ Օռլովը, - և առարկություններ չլսեմ:

Վերցնելով փորձագիտական պայուսակը՝ նա մոտեցավ փայտե դռանը, և զգուշորեն իջավ ներքև: Պայուսակից հանելով զանազան սրվակներ, սկսեց մերթ փոշիներ ցանել աստիճանների վրա ու հատակի տարբեր հատվածներում, մերթ քուլքներ քսել իրեն հետաքրքրող տեղերում, ապա սկսեց զանազան չափումներ կատարել...

Րոպեներն անցնում էին դարերի նման :

Ինչքա՞ն անցավ, ոչ ոք չգիտեր, երբ վերջապես ներքևից լսվեց քննիչի ձայնը:

- Ստուկալի՜ն, կարող եմ շնորհավորել քեզ: Ձեր որոնած նկարներն այստեղ են:

- Իսկապե՞ս, – ուրախությունից գոռաց Ստուկալինը, – ուրեմն մեր Կլավդիա՜ն... տես, է՜... Եվ ո՞վ կսպասեր, ո՞վ կենթադրեր, որ այստեղ... Ա՜յ քեզ Կլավդիա, ա՜յ քեզ սիրելի աղջիկ, թանկագին աղջիկ....

- Նկարներն անվնաս վիճակում են, – նորից լսվեց Օռլովի ձայնը, – մի քանիսն էլ խնամքով փաթաթված են թերթերով: Այստեղ մի սնդուկ էլ կա, որը երևի Ադամ-Եվայի ժամանակներից է մնացել, բայց այն բաց է և մեջը ոչինչ չկա:

- Սո՛ւտ է, – այս անգամ գոռաց Բելոկոպիտովը, – սո՛ւտ է ասում եմ, նորից նայեք քաղաքացի քննիչ, խնդրում-աղաչում եմ:

- Ես ասացի, որ սնդուկը բաց է և նրա մեջ ոչինչ չկա, – կրկնեց Օռլովը, - և այստեղ որևէ սխալ բացառվում է: Ասենք, մի քիչ էլ սպասեք, ես ձեզ հիմա ներս կկանչեմ:

Բելոկոպիտովի մոտ հիստերիա սկսվեց: Նա ջղաձգորեն լալիս էր, ձեռքերով խփում գլխին, լուտանքներ թափում «այն տականքի», «թափթփուկի» հասցեին, գոռում, որ «տականքը» իրեն դարձյալ խաբեց... Եվ երևի երկար կշարունակվեր, եթե կրկին չլսվեր քննիչ Օռլովի ձայնը:

- Ստուկալին, քաղաքացի Բելոկոպիտով, ներքև իջեք:

Երկուսն էլ աճապարեցին ներքև՝ ոտքները դնելով միայն այն տեղերում, որտեղ մատնացույց էր անում քննիչը: Հրավիրվեցին նաև երկու վկաներ:

Բելոկոպիտովը նույնիսկ չմոտեցավ նվիրական սնդուկին: Հեռվից էլ պարզ երևում էր, որ այն դատարկ էր...

- Նախնական փորձաքննության արդյունքները հետևյալն են, – Օռլովը զինվեց ցուցափայտի դեր կատարող մատիտով, – հատակին մնացած կանացի բարձրակրունկ կոշիկների ահա այս հետքերը կասկած չեն թողնում, որ այստեղ կին է եղել, – նա զետնի խճախառն ավազի վրա ցույց տվեց կանացի կրունկների հետքերը: - Քանի որ այդ հետքերի մեծ մասը նկարների շրջակայքում է և միայն մի քանիսը սնդուկի մոտ, ապա եզրակացությունն ակնհայտ է՝ կնոջը հետաքրքրել են նկարները: Սնդուկը, և ուրեմն միջի պարունակությունը, նրան չի էլ հետաքրքրել...

- Զարմանալի բան չասացիր, – Օռլովին ընդհատեց Ստուկալինը, – դա հենց մեր Կլավդիան է, մեր թանկագին Կլավդիան և այդպիսի բարձր մարդկային նկարագիրը միանգամայն բնորոշ է նրան:

- Այդ կնոջից բացի ու նրանից հետո, – խոսքը շարունակեց Օռլովը, – այս ներքնահարկն է մտել նաև մի տղամարդ: Ահա նրա կոշիկների հետքերը: Կարևոր տարբերությունը սակայն այն է, որ տղամարդուն գրեթե չեն հետաքրքրել նկարները՝ նրա ոտնահետքերը նկարների շուրջ շատ քիչ են, և առավել քան հետաքրքրել է սնդուկը: Այստեղ հետքեր՝ ինչքան ուզեք: Տղամարդը շտապել է և հավանորեն շատ է շտապել: Նա ներքնահարկի աստիճանները զույգ-զույգ, իսկ ահա այստեղ էլ՝ երեք-երեք է իջել: Իսկ քանի որ սնդուկը գաղտնափակ ունի, ուրեմն նա իմացել է նաև դրա բացելու ձևը:

Ներկաները համաձայնվեցին քննիչի հետ:

- Ոչ պակաս կարևոր մի հանգամանք ևս, – նորից սկսեց Օռլովը, – ահա պարզորոշ երևում են տղամարդու կոշիկի ներբանների հետքերը: Այսպիսի զարդանկարներ կարող են թողնել միայն արտասահմանյան կոշիկները: Այստեղից էլ պարզ եզրակացություն. այս տղամարդը մեզ մոտ է ժամանել արտասահմանից: Հիմա մեր առաջնահերթ խնդիրն է՝ պարզել տղամարդու ինքնությունը:

- Որոնումների կարիք չկա, – մռայլ նետեց Բելոկոպիտովը, – այդ տղամարդը իմ եղբայրն է, թող գրո՛ղը նրան տանի:

- Դուք կամենո՞ւմ եք լրացուցիչ տեղեկություններ հաղորդել հետաքննությանը:

- Ես արդեն ոչինչ չունեմ կորցնելու, քաղաքացի քննիչ, - Բելոկոպիտովը դառը ժպտաց, – իսկ անկեղծ խոստովանությունը գուցե կօգնի իմ գործին:

Ահա թե ինչ պատմեց նա:

•••

Ինչպես ամբողջ ՈՒկրաինայի, այնպես էլ Շեպետովկայի հարուստները տեսնում էին օր առ օր հասունացող հեղափոխությունը և, հասկանալի է, աստիճանաբար

ճողոպրում էին քաղաքից: Դա էլ պատրաստվում էին անել Բելոկոպիտովները, սակայն քաղաքում դեպքերը հասունացան այնքան արագ, և համաքաղաքացիների՝ իրենց նկատմամբ եղած թշնամությունը դրսևորվեց այնքան անսպասելիորեն, որ նրանք արդեն պետք է մտածեին նախ և առաջ իրենց կյանքը փրկելու մասին: ՈՒստի թողնելով ամեն ինչ, անգամ մեծարժեք նկարների հավաքածուն, որը Եվրոպայում վաճառելով, հույս ունեին մեծ գումարներ աշխատել, Բելոկոպիտովները մի կերպ փախան Իտալիա: Ընտանիքի հայրն այստեղ ռուս էմիգրանտ ընկեր ուներ, որը զբաղվում էր գինու առևտրով: Նրա տանն էլ տեղավորվեցին փախստականները: Նորեկների նկարագիրը դարձյալ մնաց նույնը՝ հարբեցողություն, կռիվներ, ծեծկռտուք: Քիչ ժամանակ անց Իվանը սկսեց ինչ-որ հավաքույթների մասնակցել, խմբերի անդամագրվել, որի հետևանքով օրերով, նույնիսկ շաբաթներով տուն չէր գալիս: Ավելի ճիշտ՝ գալիս էր այն ժամանակ միայն, երբ հարկավոր էր լինում հորից փող կորզել: Առարկություն կամ մերժում ստանալու դեպքում, սկսվում էր ընտանեկան «թատրոնը»: Եվ մի անգամ էլ, երբ Իվանը առանձնապես «ջանասիրաբար» փայփայեց հորը և փող պոկելով հեռացավ, Բելոկոպիտով-հայրը՝ Իվանից վրեժ լուծելու համար, Օլեգին պատմեց Շեպետովկայի մենատան բակում գտնվող գաղտնարանի, սնդուկի, նրա գաղտնափակը բացելու եղանակի և սնդուկում գտնվող հարստության մասին, որն այնքան է, որ կարելի է «ամբողջ երկրագունդը գնել»: Խենթի պես ուրախացավ Օլեգը, գրկեց-համբուրեց հորը, բայց միաժամանակ չար կասկած մտավ սիրտը: Իսկ եթե հայրն այդ բոլորը պատմել է Իվանի՞ն: Ճիշտ է, հայրը երդվում էր, որ ոչ ոքի ոչինչ չի ասել, բայց կարելի՞ էր հավատալ: Եվ ամենակարևորը. անգամ եթե չէր ասել, իսկ եթե հետագայում ասի՞: ՈՒրեմն պետք է, որ հայրը լռի և լռի վերջնականապես...

Եվ Օլեգը հոր հետ հարցերը լուծեց ատրճանակի երկու կրակոցով:

Դեպքերը, սակայն, սկսեցին զարգանալ այլ կերպ:

Բելոկոպիտովների իտալաբնակ ընկերը, զայրացած անընդհատ շարունակվող կռիվներից, մանավանդ նրանից հետո, որ «ռուսի սպանության գործով» արդեն սկսել էր զբաղվել ոստիկանությունը, մի գեղեցիկ օր երկու եղբայրներին պարզապես վռնդեց իր

բնակարանից։ Օլեգն ավելի հարմար գտավ կեղծել փաստաթղթերը, և որպես գերմանացի փոխադրվելով ֆաշիստական Գերմանիա, զինվորական ծառայության անցնել։ Անցյալի հետ հաշիվներն, այսպիսով, մաքրված էին։ Հիմա մնում էր րոպե առաջ ընկնել Շեպետովկա, տիրանալ զաղտնարանի հայրական ժառանգությանը և մնացած ողջ կյանքն անցկացնել Ֆրանսիայի կամ Իտալիայի որևէ ծովափնյա հանգստարանում։ Դեպի Շեպետովկա էր ձգտում նա տարիներ շարունակ, մինչև ահա այս րոպեն, երբ կարծես թե հասնելու էր իր նպատակին։ Բայց պարզվեց, որ իրենից առաջ այստեղ եղել է իր «տականք» եղբայրը և, ուրեմն, իր «հիմար» հայրը նրան էլ է պատմած եղել զաղտնարանի ու սնդուկի մասին, իսկ նա՝ իր «աղբ» եղբայրը, ավելի արագաշարժ է եղել...

- Ա՜յ հիմա ամեն ինչ իր տեղն ընկավ, – ասաց Ստուկալինը, – ուրեմն այս մենատանը տեղի ունեցող խորհրդավոր դեպքերի գործող անձը ձեր եղբայր Իվա՛նն է եղել։ Նա զաղտագողի տեղավորվել է հայրական մենատանը, և հարմար պահ որսալով՝ փորել է ավերակ փայտանոցի գետինը, հասել է զաղտնարանի դռանն ու ներս մտել։ Քանի որ նա, ինչպես ասաց Բելոկոպիտովը, գիտեր զաղտնափակը բացելու եղանակը, ապա բացել է այն, վերցրել եղած-չեղածը և ընդմիշտ հեռացել։ Ահա և բոլորը։ Իսկ ամբողջ քաղաքը անհանգստանում էր, հուզվում։

Բոլորն էլ լռեցին։

- Կարող եմ միայն ասել, – խոսեց Օռլովը, – որ ռազմադաշտային դատարանը, որի առջև դուք՝ Օլեգ Բելոկոպիտով, դեռ պիտի կանգնեք որպես պատերազմի հանցագործ, հաշվի կառնի ձեր կամավոր խոստովանությունը։

•••

Դուք չե՞ք եղել Շեպետովկայում։ Գնացե՛ք, անպայման գնացեք այնտեղ։ Քաղաք իջնելուն պես ձեզ կառաջնորդեն գեղարվեստական նկարների հազվագյուտ ցուցահանդեսը, նկարներ, որոնցից շատերը ունիկումներ են՝ աշխարհիս ոչ մի պատկերասրահ դրանց երկրորդ օրինակը չունի։ Ցուցահանդեսը տեղավորված է նախկին հարուստ Բելոկոպիտովների մենատան սենյակներում, որոնք հատկապես

վերակառուցվել են այդ նպատակի համար։ Այն կրում է Կլավդիա Լիտվինովայի անունը, առաջին դահլիճի պատին էլ կա նրա մեծադիր լուսանկարը։ Ձեզ կպատմեն այս ամբողջ պատմությունը, իսկ եթե ազատ ժամանակ ունենաք, ցույց կտան նաև բակի ծայրում գտնվող փայտանոցը իր գաղտնարանով։ Այնտեղ ամեն ինչ պահպանված է նույնությամբ, կան նույնիսկ Կլավդիայի և «այն մյուսի» ոտնահետքերը։ Միայն թե չզարմանաք, երբ ցուցահանդեսի էքսկուրսավարը բացատրելիս գործածի «մայրս գտավ», «մորս ջանքերով» և նման արտահայտություններ։ Չէ՞ որ նա Կլավդիա Լիտվինովայի տղան է...

Պիոներ կանչ, 1989, №№ 16-23,

փետրվարի 24-մարտի 22